




ԱՇՈՏ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ
(1923-1970-ԱԿԱՆ ԹԹ.)**



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1923 – 1970-ԱԿԱՆ ԹԹ.)**

ԵՐԵՎԱՆ - 2005

ԹՈՒՐԶԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2-րդ հատոր
Խմբագրությամբ ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ

ТУРКОЛОГИЧЕСКИЕ И
ОСМАНИСТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
2-ой том
Под общей редакцией РУБЕНА САФРАСТЯНА

TURKISH AND OTTOMAN STUDIES
volume 2
Editor of series RUBEN SAFRASTYAN

YEREVAN 2005

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

ASHOT SOGHOMONYAN

**THE CREATION AND ACTIVITIES OF THE
TURKISH HISTORICAL SOCIETY (1923 - 70-s)**

YEREVAN 2005

ՀՏԴ 950 (560)
ԳՄԴ 63.3 (5Թուրք)
Ա. 694

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է «ԱՊԱՎԵՆ» ՄՊԸ
մեկեմասությամբ

This publication was made possible by "APAVEN" LTD

Պատասխանատու խմբագիր՝

Ա.Գ.Ք. Ռուբեն Սաֆրաստյան

Գրախոսներ՝

Ապտմական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ալեքսանդր Սաֆարյան

Բանասիրական

գիտությունների թեկնածու

Լուսինե Սահակյան

Սողոմոնյան Ա. Թուրքական պատմագիտական ընկերության
ստեղծումը և գործունեությունը (1923-1970-ական թթ.): - Եր.:
«Լուսաբաց հրատարակչատուն», 2005:

Սույն աշխատանքում ներկայացվում են Թուրքական պատ-
մագիտական ընկերության ստեղծման նպատակները և գործունե-
ությունը, ինչպես նաև ընկերության հեղինակած թուրքերի պատ-
մության «նոր» հայեցակարգը:

Լախատեսվում է արևելագետների, դիվանագետների, քաղա-
քագետների, բուհերի ուսանողների, ինչպես նաև հասարակույթ-
յան լայն շրջանակների համար:

Ս 0503030000
0147(01)-2005 2005

ԳՄԴ 63.3(5Թուրք)

ISBN 99941-37-41-7

© Ա. Սողոմոնյան, 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ	13
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ	27
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	30
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ	38
ՎԵՐՋԱԲԱՆ	59
ԱՂՔՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	61

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ներկայացվող դրույթների և մոտեցումների, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության ղեկավար շրջանակների որդեգրած քաղաքականության ուսումնասիրությունը մեզանում կարևորվում է գիտական, քաղաքական և գործնական տեսանկյունից: Թուրքիայի Հանրապետությունն այն պետությունն է, որը ստեղծվել է Օսմանյան կայսրությունում բնակվող ժողովուրդների ցեղասպանության հատկապես Հայոց ցեղասպանության արդյունքում: Ցեղասպանության պատմական իրողությունն իր խորը հետքն է թողել Թուրքիայի Հանրապետության ամբողջ հետագա հասարակական-քաղաքական զարգացման վրա՝ անդրադառնալով նաև թուրքական պատմագրությանը, նրա հիմնադրույթներին և հայեցակարգերին: Մինչ օրս Հայոց ցեղասպանության պատմական իրողության փաստի անտեսումը կամ հերքումը մնում է ժամանակակից Թուրքիայի և նրա պաշտոնական պատմագրության առանցքային հայեցակարգերից մեկը՝ համապատասխան ազդեցություն գործելով թուրքական քաղաքական շրջանակների որոշումների և վարքագծի, ինչպես նաև թուրք պատմաբանների ճնշող մեծամասնության հրապարկումների և դիրքորոշումների վրա:

Երիտթուրքերի իրականացրած ոճրագործության մասին հայ պատմագրության մեջ հրապարակվել են պաշտոնական ու արխիվային հավաստի փաստաթղթերի ժողովածուներ, ականատեսների և կոտորածներից փրկվածների հուշեր ու վկայություններ, ինչպես նաև գիտական ուսումնասիրություններ և այլ բնույթի շատ աշխատություններ:¹ Սակայն թուրքական պաշ-

¹ Ներսիսյան Ա.Գ., *Հայոց 1915-1916թթ. Ցեղասպանությունը, Մատենագիտություն, Երևան, 1995թ., էջ 5, ընդհ. 111 էջ: Հայերի Ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Ա.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 1991թ., 760էջ: Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, «Զանգակ 97» հրատ., 2002թ., 29 էջ: Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Երևան, «Հայաստան», 1990թ., 368 էջ: Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1963թ., 96 էջ: Սարգիսով Ե.Դ., Սաֆրաստյան Ա.Խ., Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին, Արևելագիտական ժողովածու I, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960թ., 379-400: Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. - 1914թ.), Գիրք առաքին, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982թ., 358 էջ: Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Հ. Փափազյանի, Հայկական ՍՄԴ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1988թ., 256 էջ:*

տոնական պատմագրության կողմից հրատարակված Հայոց ցեղասպանության փաստի հերքման և դրա վերաբերյալ կեղծարարության հարցերը դեռևս չեն ներկայացվել առանձին ուսումնասիրությամբ: Հեղինակների մի մասն անդրադարձել է ամբողջ Հայոց պատմության, մասնավորապես Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի տեղաբնիկ լինելու վերաբերյալ թուրքական կեղծարարություններին, մյուս մասը՝ թուրքերի կողմից իրագործված ցեղասպանությանը՝ Արևմտյան Հայաստանից հայերի տեղահանություններին, կոտորածներին և այլն: Այդուհանդերձ, նրանց

Համբարյան Ա., Ստեփանյան Ա., *Հայոց ցեղասպանությունը, ԴԴ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1995թ., ընդհ. 70 էջ: Զուլալյան Ա., Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագրության մեջ /հին և միջին դարեր/, «Հայաստան», 1995թ., 192 էջ: Зулалян М.К., "Вопросы древней и средне-вековой истории Армении в освещении современной турецкой историографии", Издательство Академии наук СССР, Ереван 1970, стр. 5, 19, стр 147, Dadrian N.V., THE NAIM – ANDONIAN DOCUMENTS ON THE WORLD WAR I DESRUCTION OF OTTOMAN ARMENIANS: THE ANATOMY OF A GENOCIDE, Vol. 18, August 1986, no.3, INTERNATIONAL JOURNAL OF MIDDLE EAST STUDIES, The Middle East Studies Association of North America Cambridge University Press, 1986, p. 311-360, Dadrian N.V., THE KEY ELEMENTS IN THE TURKISH DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE: A CASE STUDY OF DISTORTION AND FALSIFICATION, The Zoryan Institute, 1999, p. 84., Dadrian N.V., ERMENİ SOYKIRIMINDA KURUMSAL ROLLER, Toplum makaleler, Kitap 6, Belge Yayınları, İstanbul, 2004, ss. 329,*

աշխատություններում որպես ուսումնասիրության հիմնական առարկա չեն հանդիսացել թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) կողմից ներկայացված թուրքական պատմական «նոր» հայեցակարգը Հայոց ցեղասպանության փաստի մերժման և խեղա-թյուրման հարցում:

Թուրքական պատմագիտական ընկերության գործունեության առանձին խնդիրներին անդրադարձել է արևելագետ Անուշ Հովհաննիսյանը*: Ըստ նրա Աթաթուրքը առաջնահերթ էր համարում «մարդկանց գիտակցությունից արմատախիլ անել միապետության կամ իսլամական աշխարհի հանդեպ եղած հավատարմության գաղափարը փոխարինելով այն հայրենիքին նվիրվածության գաղափարով»²: Այս նպատակին հասնելու միջոցներից մեկը համարվեց պատմությունը, իսկ նրա նախաձեռնությամբ ստեղծված Թուրքական պատմագիտական ընկերությունը կոչված էր դառնալու գաղափարախոսության և մշակույթի ասպարեզում պետական քաղաքականությունն անցկացնող միջնորդ: Թուրք գիտնականների առջև դրված էր իր էությամբ նացիոնալիստական խնդիր, այն է՝ ապացուցել անատոլիական թուրքերի բնիկ լինելը և

* Հովհաննիսյան Ա. Ռ., «Թուրքիայում «Նոր Պատմական Կոնցեպցիայի» մշակման հարցի շուրջը (XX դ. 30-ական թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XV, Հայկական ՍՄԴ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1989թ., էջ 7:

դրանով իսկ «գիտականորեն» հիմնավորել նրանց իրավունքը Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ³:

Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ և ընդհանրապես թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության փաստի հերքման գործընթացը Թուրքիայի Հանրապետության ձևավորման տարիներից ի վեր եղել է հետևողական և այսօր էլ շարունակում է մնալ Թուրքիայի քաղաքական օրակարգում և հանդիսանալ թուրքական պատմագիտության համար բանավեճի առարկա: Սույն աշխատանքը կարևորություն է ստանում նաև ներկա ժամանակաշրջանում Հայաստանի և Թուրքիայի միջպետական հարաբերություններում Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ ծավալվող զարգացումներով: Թեմայի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նաև ժամանակակից Թուրքիայում պաշտոնական պատմագրության, նրա գիտական հիմնադրույթների և քաղաքական հայեցակարգերի մասին հստակ պատկերացում ունենալու պարագայով:

Քեմալականների համոզմամբ մինչև 1930-ական թվականները Թուրքիայում չկար այնպիսի մի կազմակերպություն, որը կկատարեր պատմագիտական և հնագիտական ուսումնասիրություն:⁴ Թուրքիայի Հան-

³ *St'ün ünüyün տեղում, էջ 7:*

⁴ *Iğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu, - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 1, ss.158*

րապետության հռչակումից հետո ստեղծված «Թուրքական պատմագիտական հանձնախումբ» կոչվող ընկերության նպատակն էր «լուսաբանել» օսմանյան պատմությունը: Հետագայում պատմագիտական և հնագիտական ուսումնասիրությունների հնարավորություն ստեղծվեց արդեն Թուրքական պատմագիտական ընկերության կազմավորմամբ: Աթաթուրքի նախաձեռնությամբ ստեղծված Թուրքական պատմագիտական ընկերությունը ստանձնել էր պատմությունն ուսումնասիրելու և այն նոր տարբերակով ներկայացնելու պարտականությունը⁵:

Ելնելով Թուրքիայում պաշտոնական պատմական նոր հայեցակարգի ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրության և նրա ամբողջական բնութագրման ու վերլուծության նպատակներից սույն աշխատանքում ներկայացվում են Թուրքիայի Հանրապետության ստեղծմանն ու կայացմանը զուգընթաց առաջ մղված թուրքական պատմական նոր հայեցակարգի մշակման ուղիներն ու եղանակները, որոնց միջոցով երկրի իշխանությունները փորձում էին լուծել պետության առջև ծառացած մի շարք խնդիրներ: Ուսումնասիրվել և քննության է առնվել թուրքական պաշտոնական պատմագրությունը՝ հիմնականում նրա գլխավոր կառույց հանդիսացող Թուրքական

⁵ *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basimevi - Ankara, 1948, s. XXIX, ss. 775*

պատմական ընկերության հրապարակումները, որոնց
միջոցով ընկերությունը թուրքիայում և արտերկրում
վարում էր պատմական նոր հայեցակարգի տարած-
ման քաղաքականությունը:

Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման քաղաքական ու գաղափարական նախադրյալները

Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1919 – 1922թթ. Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի տարածաշրջանում ծավալված քեմալական շարժման (milli hareket) արդյունքում կազմավորվեց Թուրքիայի Հանրապետությունը⁶: 1923թ. հոկտեմբերի 29-ին հռչակվեց Թուրքիայի Հանրապետությունը, որի առաջին նախագահ ընտրվեց Մուսթաֆա Քեմալ Փաշան (Աթաթուրք) և հենց ինքն էլ նույն օրը վարչապետ նշանակեց Իսմեթ Փաշային (Ինոնյույին)⁷: Մինչ այդ 1923թ. հունվարի 6-ին Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը հանդես եկավ նոր քաղաքական ուժի՝ ժողովրդական կուսակցության (ԺԿ) ստեղծման մասին հայտարարությամբ⁸: Խոսելով ԺԿ-ի գործունեության ոլորտների մասին Քեմալը նշում էր, որ ժողովրդական կուսակցությունը պարտավորվում է Թուրքիային հաղորդակից դարձնել ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գործընթացներին և այդ բնագավառում ապա-

⁶ А.Шамстудинов, *Турецкая Республика. Москва, 1962. с. 12*

⁷ Afetinan A., “Türkiye Cumhuriyeti Devleti”, *Bellefen, Cilt: XLVII, Ekim 1983, Sa. 188, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1984. s.926, ss. 1234.*

⁸ Рустамов Ю., „Современная турецкая буржуазная социология,, , Баку, Изд. АН Азерб. ССР, 1967, с. 153

հովել նրա վերելքը⁹: 1924 թվականին ժողովրդական կուսակցությունը վերանվանվում է ժողովրդահանրապետական կուսակցություն (ԺՀԿ): Այդ ժամանակաշրջանում Թուրքիայում սոցիալ - քաղաքական իրավիճակն այնպիսին էր, որ անհրաժեշտ էր ստեղծել մի կազմակերպություն, որը ժողովրդի շրջանում կարող էր քարոզել պաշտոնական (պետական) գաղափարախոսությունը՝ քեմալիզմի գաղափարախոսությունը: XXդ. սկզբին քեմալիզմը կարիք էր զգում ակտիվ քարոզչության և փորձում էր իր իշխանությունը հաստատել բոլոր բնագավառներում: Պարզ երևում էր, որ քեմալական շարժումը նոր աղետներ է բերելու երկրի ոչ թուրք ժողովուրդներին: Լինելով կատաղի ազգայնամուլներ՝ քեմալականները հենց սկզբից ոտնահարեցին հույների, արաբների, հայերի, լազերի, քրդերի մարդկային տարրական իրավունքները¹⁰: Հենց այդ ոգով էլ թուրքական իշխանությունները փորձում էին դաստիարակել նոր սերունդներին:

Դա տեղի էր ունենում այն պարզ պատճառով, որ քեմալականները Թուրքիայի քաղաքական կյանքում եական տեղ էին հատկացնում ազգայնականության սկզբունքին: Այն հնարավոր էր կիրառել ինչպես ազ-

⁹ *Atatürk'ün Söylev ve Demeçleri*, c. 2, Ankara, 1959, s. 189

¹⁰ Սիմոնյան Չր.Ռ., «Թուրք Ազգային Բուրժուազիայի Գաղափարաբանությունը և Քաղաքականությունը», Հալապտան Դրատարակչություն, Երևան 1986թ., էջ 487-488:

գային պետության գաղափարախոսության, այնպես էլ այդ գաղափարախոսության ամենաագրեսիվ, անհանդուրժողական տարբերակի իմաստով:

Սուսթաֆա Քեմալի նախաձեռնությամբ հիմնադրված Ժողովրդահանրապետական կուսակցության նպատակներից էր կազմավորել կուսակցական կառույցները և ապարատը, կենտրոնացնել պետական և կուսակցական իշխանությունը, մշակել գաղափարախոսությունը, հաստատել կուսակցության գերակայությունը պետական քաղաքականության մեջ և խստացնել միակուսակցական վարչակարգը: Այս ամենի և հատկապես թուրքական պետության ստեղծման արդյունքում ստեղծվեց քեմալական գաղափարախոսությունը, որն իր մեջ ներառում էր խիստ ազգայնական տարրեր:¹¹ Հարկ է նշել, որ թուրք պատմաբան Հալիլ Բերկթայն իր նշված հրապարակումներում համեմատաբար ավելի օյեկտիվ է ներկայացնում թուրքական իշխանությունների գործունեությունը և մտահղացումները:

Սուստաֆա Քեմալը վերցնելով Գյոքալփի թյուրքիզմի ազգայնականության տարրերը, զարգացնելով այն, թուրքական ազգայնականությունն առանձնացրեց պանթյուրքիզմից: Դրա մի պարզ օրինակ է Ադանայի արհեստակցական ընկերությունների հետ հան-

¹¹ *Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 13, ss. 111.*

դիպման ընթացքում Աթաթուրքի արտահայտած հետևյալ խոսքերը. «Մեր ընկերներն ասել են, որ հայերը օկուպացրել են մեր արվեստի կենտրոնները, երկրի տիրոջ կարգավիճակով իրենց համար մեծ հնարավորություններ են ստեղծել: Անկասկած ավելի մեծ անօրինականություն և անպատկառություն չէր կարող լինել: Հայերն այս բերրի երկրում ոչ մի իրավունք չունեն: Ձեր երկիրը ձերն է, թուրքերինն է: Այս երկիրը եղել է թուրքերինը, այժմ էլ թուրքերինն է և ապագայում էլ թուրքերինն է լինելու: Հայերը և մյուսներն այս երկրում իրավունքներ չունեն: Այս բարեբեր վայրերը իսկական և հարազատ թուրքիան է»:¹²

Այսպիսով, ասպարեզ հանվեց քեմալիզմի չորս «հիմնաքարից» և «վեց սկզբունքից» բաղկացած գաղափարական համակարգը: Դրա համաձայն, թուրքաիայի Հանրապետությունը չորս «հիմնաքարերի» վրա է հենվում.

1) հայրենիք 2) ազգ 3) հանրապետություն 4) սոցիալական իրավունքներ:

Քեմալականները կիրառում էին նաև քեմալիզմի վեց սկզբունքները՝ ազգայնականությունը, ժողովրդականությունը, պետականությունը, աշխարհիկությունը (laiklik), հեղափոխականությունը, ինչպես նաև մեր օրերի աթաթուրքականության (ataturkçülünğümün)

¹² *Atatürkün Söylev ve Demeçleri II, ikinci baskı, Türk Tarih Kurumu Basıncvi - Ankara, 1959, s. 126, ss. 290,*

գաղափարախոսությունը, որոնք տարբեր թուրք հեղինակների կողմից մեկնաբանվել և ներկայացվել են յուրովի:¹³

Քեմալիզմի գաղափարախոսներից թեքին Ալփը նշել է. «Քեմալիզմի հիմքը կազմում և նրա զարգացման տարր է հանդիսանում թուրքական ազգայնականությունը», իսկ Աթաթուրքի ազգայնական գաղափարախոսության ընկալումը թեքին Ալփը ներկայացնում է որպես «մշակութային ազգայնականություն»¹⁴:

Քեմալականները օգտագործում էին այն «ազգային պետության» հասկացության առումով, որն արտահայտում էր ծագումով, լեզվով և մշակութով միատարր բնակչությունից կազմված պետության գաղափարը: Այն մուտք է գործել թուրքիա Արևմուտքից XX դարի սկզբին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և Օսմանյան կայսրության փլուզումից հետո դառնալով ժամանակակից թուրքիայի քաղաքական մտքի գերակայող հոսանքներից մեկը, եթե ոչ հիմնականը¹⁵:

¹³ *Այդ մասին տե՛ս Belleten, Cilt: XLVI/1, Sayı: 177, Ocak 1981, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1981, s. 228, ss. 419,*

¹⁴ *Այդ մասին տե՛ս Atatürkçe Saygı, Türk Dil Kurumu Yayınları:288, Ankara Üniversitesi Basımevi, 1969, s.54-55, ss.520,*

¹⁵ *Բաղդասարյան Ս. Կ., «Թուրքիայի քաղաքական շանակարգը 1920-1930-ական թթ.-ին», Ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան 2000թ., էջ 59-60:*

Թուրք պատմաբան Նեջաթ Քայմազը նշում է, որ Թուրքիայում տարվում է պատմությունը մոդեռնիզացնելու և եվրոպականացման քաղաքականություն, այսինքն կայսրությունից անցումը հանրապետության արտացոլվում է նախևառաջ պատմության ոլորտում¹⁶:

Դրա հիմնական փաստարկն այն է, որ Թուրքիայի Հանրապետության կազմավորման ընթացքում Սուլթաֆա Քեմալի նախաձեռնությամբ 1927թ. ստեղծվեց «Թուրքական պատմագիտական հանձնախումբ» (Türk Tarihi Encümeni), որի միջոցով փորձ էր արվում հանրությանը ներկայացնել թուրքական պատմական «նոր» հայեցակարգը:

Քեմալականները գտնում էին, որ մինչ Աթաթուրքի հանդես գալը թուրք ազգն ուներ պատմական երեք տեսակետ՝ կրոնական, ազնվական, ռասիստական: Սրանցից ամենակարևորը կրոնական տեսակետը մուսուլմանական հանրության պատմությունն էր ներկայացնում: Երկրորդ տեսակետը՝ ազնվականը ներկայացնում էր օսմանյան ընտանիքների պատմությունը, իսկ երրորդը՝ ռասիստականը, նեղ շրջանակների մեջ էր պահում Թուրքիայի պատմությունը¹⁷: Այսինքն քե-

¹⁶ *Şükrü Berktay H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 13, ss. 111:*

¹⁷ *Atatürk'e Saygı, Türk Dil Kurumu Yayınları: 88, Ankara Üniversitesi Basımevi, 1969, s. 97, ss. 520,*

մալականների պնդմամբ մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը թուրք պատմաբաններին հնարավորություն չի տրվել հասարակությանը ներկայացնելու Թուրքիայի պատմությունը:

1928թ. նոյեմբերի 3-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից ընդունվեց թուրքերենի լատինատառ այբուբենը, որից մեկ տարի հետո դպրոցներում դադարեցվեց արաբերենի և պարսկերենի ուսուցումը: Քեմալականներն այդ ամենի արդյունքում ցանկանում էին անջրպետ ստեղծել Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության միջև, որպեսզի հանրությունը տեսներ և համոզվեր, որ թուրքական նոր իշխանությունները գործադրում են ամեն ջանք նոր Թուրքիա ստեղծելու համար:

1930-ական թվականներին «հանձնաժողովներով» իրենց աշխատանքները սկսեցին Թուրքական պատմագիտական ընկերությունը (Türk Tarih Kurumu) և Թուրքական լեզվաբանական ընկերությունը (Türk Dil Kurumu), որոնք հետագայում Աթաթուրքի նախաձեռնությամբ որպես կազմակերպություններ ստեղծվեցին պաշտոնապես: Թուրքական լեզվաբանական ընկերության ստեղծման նպատակն էր Թուրքիայում մեծացնել հարգանքը թուրքերեն լեզվի նկատմամբ և ապահովել թուրքերենի անկախությունը այլ լեզուներ

րի ազդեցությունից¹⁸: Աթաթուրքի խոսքերի համաձայն այդ երկու ընկերությունները թուրքիայի պատմության ու լեզվի մութ ու մոռացված հատվածները հրապարակ բերելով փորձելու են դրանք ներկայացնել ամբողջ աշխարհին¹⁹:

Վերոնշյալ նկատառումներից ելնելով և դրանց ազդեցությամբ թուրքիայի Հանրապետության իշխանությունները ձեռնամուխ եղան թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման աշխատանքներին: Ընկերությունը ստեղծվել է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի անմիջական նախաձեռնությամբ: 1930 թվականի ապրիլի 23-ին «Թուրքական օջախների» 6-րդ համագումարում, որի ընթացքում ելույթ ունեցան Աֆեթ (Ինանը), Սադրի Մաքսուդի (Արսալը) և Ռեշիթ Գալիփը²⁰, դրվեց թուրքական պատմագիտական ընկերության հիմնաքարը²¹:

Սինչ հանրապետական թուրքիայի ստեղծումը Օսմանյան կայսրության թե՛ քաղաքական և թե՛ գիտական շրջանակներում մեծ հեղինակություն էր վա-

¹⁸ *Türk Dil Kurumunun 10 Yılı, Türk Dil Kurumu Yayınları, Ankara Üniversitesi Basımevi, 1972, s. 15, ss. 186,*

¹⁹ *Tütengil C. O., "Atatürk'ü Anlamak ve Tamamlamak", Varlık Yayınevi, Ankara Caddesi, İstanbul, 1975, s.52-53, ss.238,*

²⁰ *Այդ մասին տե՛ս Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 52, ss. 111,*

²¹ *Տե՛ս նույն տեղում, էջ 52:*

յելում Թուրքական օջախներ (Türkocağı) կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1912թ. մարտի 12-ին 190 ռազմական ուսանող-բժիշկների անմիջական մասնակցությամբ²²։ Այս կազմակերպության հիմնադրման հետ զուգահեռ Թուրքիայում սկսում է զարթոնք ապրել ազգայնական գաղափարախոսությունը։ Թուրքական օջախների ստեղծման նպատակներն արտահայտվում են այդ կազմակերպության կանոնադրության երկրորդ կետում. «Իսլամական ժողովուրդների առաջնորդ հանդիսացող թուրքերն իրենց ազգային դաստիարակությամբ և գիտական, սոցիալական, տնտեսական վիճակի առաջընթացով և վերելքով ձգտում են հասնել թուրքական ցեղի և թուրքերեն լեզվի կատարելության...»։ Թուրքական օջախները հիմնադրման պահից զարգացում են ապրել Միասնություն և Առաջադիմություն կուսակցության (İttihat ve Terakki) և հատկապես էնվեր Փաշայի կողմից տրված նյութական և բարոյական աջակցության շնորհիվ²³։

Էնվեր Փաշան նյութական օգնություն էր ցուցաբերում ինչպես Թուրքական օջախներ կազմակերպությանը, այնպես էլ թուրքականության գաղափարախոսու-

²² *Avcıoğlu D., "Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e", İkinci Kitap (İkinci Baskı), Tekin Yayınevi, Yaylacık Matbaası, İstanbul, 1976, s.459, ss.896*

²³ *Aydemir Ş. S., "Makedonya'dan Ortaasya'ya Enver Paşa", İkinci Cilt (1908 - 1914), II Baskı, İstanbul, Remzi Kitabevi, 1976, s. 476, ss. 573,*

յունը դավանողներին: Օրինակ Թուրքական պատմագիտական ընկերության արխիվային փաստաթղթերում նշվում է, որ Էնվեր Փաշայի ստորագրությամբ 1.000 ոսկի է հատկացվել Քյազիմ Բեյին (Օրբայ), որը զբաղվում էր արդեն իսկ նշված գործերով²⁴:

Անդրադառնալով «Թուրքական օջախներ» կազմակերպությանը ռուս պատմաբան Կոլեսնիկովը նշել է, որ 1920 - ական թվականներին Թուրքիայի քաղաքական կյանքում վերստին հրապարակ գալով «Թուրքական օջախներ» կազմակերպությունը շարունակել է պահպանել Օսմանյան կայսրությունում ունեցած հեղինակությունը²⁵:

Նախկին Օսմանյան պատմական հանձնաժողովի (հանձնախմբի) (Tarih-i Osmanî Encümeni) իրավաժառանգորդ հանդիսացող Թուրքական պատմական հանձնախմբի (Türk Tarihi Encümeni) կազմավորումից հետո, 1927թ. հուլիսի 6-ի թիվ 5419 որոշմամբ, Կրթության նախարարության կողմից (Maarif Vekâleti) Ստամբուլում, համալսարանի (Darülfünûn) շենքում Ֆուաթ Քյոփրուլյույի նախագահությամբ ձևավորվե-

²⁴ *St'is նույն տեղում, էջ 478:*

²⁵ *Колесников А.А., "Народные дома в общественно — политической и культурной жизни турецкой республики", Издательство "Наука", Главная редакция восточной литературы, Москва 1984г., стр. 55, стр. 150,*

ցին և հետագայում կարևոր գործունեություն ծավալեցին հետևյալ կառույցները.

ա) 1930թ. Թուրքական օջախների 6-րդ համագումարի ժամանակ կազմավորվել է Թուրքական օջախներին կից Թուրքական պատմական ուսումնասիրման հանձնախումբը, որը 1930թ. հունիսի 4-ին գումարել է առաջին ժողովը:

բ) Մեկ տարի հետո Թուրքական օջախների փական կապակցությամբ այդ հանձնախումբը 1931թ. ապրիլի 15-ին վերակազմավորվեց Թուրքական պատմագիտական ուսումնասիրման միության:

գ) 1935թ.-ին այս կազմակերպությունը հայտնի դարձավ որպես Աթաթուրքի կողմից ստեղծված Թուրքական պատմագիտական ընկերություն»²⁶:

Այսպիսով վերոնշյալից ակնհայտ երևում է, որ Թուրքիայի Հանրապետության իշխանությունները երկրի կառավարման հիմնական սկզբունքների առումով համարվում են Օսմանյան կայսրության հավատարիմ իրավաժառանգորդ: Նույնիսկ քաղաքական և պատմագիտական կազմակերպություններն իրականում ոչ թե նոր գաղափարների արդյունք են, այլ նախկին կազմակերպությունների անավարտ թողած գործերի շարունակողներ:

1908թ.-ից հետո ստեղծվեցին ազգայնական գա-

²⁶ *Տես նույն տեղում, էջ 57:*

ղափարախոսություն կրող Միասնություն և Առաջադիմություն ակումբները (İttihat ve Terakki Kulüpleri), թուրքական օջախներ (Türk Ocağı), թուրքական հայրենիք (տուն) (Türk Yurdu), Դեպի ժողովուրդը (Halka Doğru) կազմակերպությունները²⁷:

Թուրքականության (Türkçülük) շարժումը (1908 – 1913թթ.) ներկայացվել է «Թուրքական միություն» կազմակերպության և միևնույն անվանումը կրող ամսագրի, «Թուրքական օջախներ» միության, «Թուրքական հայրենիք» ամսագրի միջոցով (հարկ է նշել, որ այդ շարժմանը ակտիվորեն մասնակցել են նաև այլ կազմակերպություններ և պարբերականներ, որոնցից հատկանշական է «Երիտասարդ գրիչներ» (Genç Kalemler) ամսագիրը): «Թուրքական միություն» կազմակերպությունը ստեղծվել է 1908թ. վերջին, իսկ կազմակերպության կանոնադրությունն ընդունվել է 1909թ. հունվարին: Կազմակերպության հիմնական նպատակն էր ամբողջ թյուրքական աշխարհում տարածել գիտական թյուրքականություն: Այս կապակցությամբ կանոնադրության երկրորդ կետում նշվում է հետևյալը.

«Կազմակերպության հիմնական նպատակն է թյուրքական ծագում ունեցող բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին տեղեկացնել անցյալում տեղի ունեցած և

²⁷ Avcioğlu D., "Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e", *İkinci Kitap (İkinci Baskı)*, Tekin Yayınevi, Yaylacık Matbaası, İstanbul, 1976, s.459, ss.896

ներկայումս կատարվող գործողություններին, ինչպես նաև ստեղծված իրավիճակին, այսինքն թյուրքերի դարերի ի վեր եկող ազատությանը, լեզվին, ժողովրդական և ընտիր գրականությանը, ազգագրությանը և ազգաբանությանը, քաղաքակրթության ներկա իրավիճակին, թյուրքական երկրների հին և նոր աշխարհագրությունը ուսումնասիրելով արդյունքները հրապարակել ամբողջ աշխարհում, ամեն ջանք գործադրել մեր լեզուն պարզ, գեղեցիկ և գիտական մակարդակի բերելու ուղղությամբ, ինչպես նաև ուղղագրությունը ուսումնասիրել վերոնշյալին համապատասխան»:²⁸

Թյուրքականության վերաբերյալ արտահայտվել է նաև Զիյա Գյոքալփը, ըստ որի թյուրքականությունը (ավելի ընդհանուր ընկալմամբ ազգայնականությունը) համապատասխանում է իսլամական կրոնին և հիմնվելով պատմության ու գաղափարի վրա ուժեղացնում է այն²⁹:

20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում թյուրքականության շարժումը ինքնին առաջ բերեց մի իրավիճակ, որն էլ ավելի նպաստավոր պայմաններ էր ստեղծում շարժման հետագա զարգացման համար: Շարժման առաջնորդները առաջ բերեցին մի շարք խնդիրներ, որոնց լուծման հնարավորությունները քա-

²⁸ Bayur Y.H., *T2rk Şnkl'ibi Tar4h4, C4ld III, s.400, ss. 601,*

²⁹ Bayur Y.H., *T2rk Şnkl'ibi Tar4h4, C4ld II, s.374, ss. 397,*

րոգչության ծնով փորձում էին ներկայացնել հասարակ ժողովրդին:

Այդ խնդիրներից հատկանշական են երկուսը.

1. Կազմակերպել թուրքերի տեղափոխությունը կայսրության մյուս շրջաններից դեպի Անատոլիա,

2. Անհրաժեշտ է փոփոխություն մտցնել պետական պաշտոնյաների մտածելակերպի մեջ³⁰:

Բնականաբար այս ամենը քեմալականների կողմից կատարվում էր զուտ նրա համար, որպեսզի հասարակ ժողովրդի շրջանում ավելի մեծ հետաքրքրություն առաջացնեն իրենց նկատմամբ: Քեմալականներն այս խնդիրներից մի քանիսի լուծման ուղղությամբ փորձեցին զբաղվել մասամբ: Հասարակ ժողովրդին այդ և մի շարք այլ խնդիրների վերաբերյալ որոշակի տեղեկատվություն հաղորդելու և անհրաժեշտ քարոզչություն ապահովելու նպատակով որոշվում է ստեղծել մի կազմակերպություն, որը կատարելով պատմագիտական ուսումնասիրություններ կարող է հրատարակել պատմության դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Այս ամենի արդյունքում առաջացավ Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման գաղափարը:

³⁰ Այդ մասին տե՛ս Metin H., "Türkiyenin Siyasi Tarihinde Ermeniler ve Ermeni Olayları", Milli Eğitim bakanlığı Yayınları: 2437, Bilim ve Kültür Eserleri dizisi:güç, Araştırma - İnceleme:32, İstanbul, 1992, s. 41, ss.192,

Թուրքական պատմագիտական ընկերությունը

Թուրքական պատմագիտական ընկերության (բաղկացած էր 16 անդամից) առաջին ժողովը տեղի է ունեցել 1930 թվականի հունիսի 4-ին Թուրքական օջախների կենտրոնական մասնաշենքում, որտեղ նախագահ Դամդուլլահ Սուպհի գլխավորությամբ ընտրվում է ղեկավար մարմին հետևյալ կազմով. նախագահ՝ Դանրապետության նախագահի գլխավոր քարտուղար Մեհմեդ Թեֆիք (Բըլըքօղլու), փոխնախագահ՝ Իրավաբանական ֆակուլտետի քաղաքական պատմության ամբիոնի պրոֆեսոր և Ստամբուլից ընտրված պատգամավոր Յուսուֆ Աքչուրա, փոխնախագահ՝ Չանաքքալեի պատգամավոր Սամիհ Ռիֆաթ, գլխավոր քարտուղար՝ Այդընի պատգամավոր դոկտոր Ռեշիթ Գալիփ³¹:

1930 թվականի վերջերին, հանձնախումբը հրատարակում է «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» վերտառությամբ 606 էջանոց մի աշխատություն³², որի առաջին էջում հին պատմագիտության վերաբերյալ նշվում է հետևյալը. «Մինչ այժմ մեր երկ-

³¹ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - *Türk Tarih Kurumu Basımevi - Ankara* 1973, s. 4, ss.158

³² İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu„ - *Türk Tarih Kurumu Basımevi - Ankara* 1973, s. 5, ss.158,

րում հրատարակված պատմության գրքերից շատերում, որպես սկզբնաղբյուր օգտագործված ֆրանսերենով պատմության գրքերում գիտակցաբար կամ անգիտակցաբար նվազեցվել է թուրքերի դերը համաշխարհային պատմության մեջ»³³:

Թուրքերին խիստ անհանգստացնում էր այն հանգամանքը, որ օտարերկրյա գիտնականները կարող են հանրությանը ներկայացնել բոլոր այն իրողությունները, որոնք կազմում են Թուրքիայի պատմությունը: Պարզ է, որ թուրքական պատմագիտական ընկերություններն անելու էին ամեն ինչ նվազեցնելու օտարերկրացիների կողմից Թուրքիայի պատմության վերաբերյալ բոլոր այն հրապարակումների քանակը, որոնք չէին բխելու Թուրքիայի Հանրապետության շահերից: Այս դեպքում նույնպես մեծ էր Թուրքական պատմագիտական ընկերության դերը, քանի որ ընկերության համագումարներին հրավիրվում էին մասնակցելու գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից:

Ստեղծման օրից մինչև 1940թվականը ընկերությունն իր աշխատանքները կազմակերպել է նախկին Թուրքական օջախներին պատկանող շենքում: 1940թ.-ից ընկերությունն իր աշխատանքները շարունակել է Անկարայի համալսարանի Լեզվի և պատմա -

³³ *Berkay H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 51, ss. 111,*

աշխարհագրական ֆակուլտետի շենքում³⁴:

1931 թ-ին փակվում է Թուրքական օջախներ կազմակերպությունը և այն որպես Թուրքիայի պատմության ուսումնասիրման հանձնախումբ այլևս չի գործում, քանի որ լեզվական բարեփոխումներից հետո կազմակերպությունը 1935թ.-ին Աթաթուրքի կողմից վերանվանվում է «Թուրքական պատմագիտական ընկերություն»:

³⁴ *Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s.1, ss.40,*

Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման նպատակները.

Թուրքիայի Հանրապետության հռչակումից առաջ պատմագիտական ուսումնասիրություններ չեն կատարվել: Հնագիտական մի քանի փոքր պեղումներ կատարվել են Ստամբուլի թանգարաններում և որոշ պեղումներ էլ օտարերկրացիների կողմից³⁵:

Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծման նպատակների մասին նշված է ընկերության կանոնադրության 4-րդ և 5-րդ կետերում, ինչպես նաև հետազայում այդ մասին հրապարակվել է ընկերության պաշտոնական օրգան հանդիսացող «Belleten»³⁶ կոչվող ամսագրում, որը 1937թ.-ից մինչ օրս հրատարակվում է երեք ամիսը մեկ անգամ³⁷:

³⁵ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu,, - *Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 2-3, ss.158,*

³⁶ “Belleten” տեղեկագիր: Քենալ Դեմիրայի “Türkçe Sözlük ve Yazım Klavuzu” վերտառությամբ բառարանում Belleten-ը ներկայացվում է հետևյալ կերպ - “Bilim kurumlarının çalışmaları ile ilgili yazı ve haberleri yayımlayan dergi, bilim dergisi” - «Գիտական ընկերությունների ուսումնասիրությունների հետ կապված նյութեր և տեղեկատվություններ հրատարակող գիտական հանդես, գիտական հանդես»:

³⁷ İğdemir U., Atatürk ve Belleten, *Belleten III/10(1939) 355-356, lev, XCIX.*

Կետ 4-րդ. Ընկերությունը նպատակ է հետապնդում ուսումնասիրելու Թուրքիայի պատմությունը, դրա հետ կապված խնդիրները, այնուհետև արդյունքները հրապարակել պաշտոնական օրգանում: Ընկերությունն ուսումնասիրելու և հրատարակելու է թուրքերին և Թուրքիայի պատմությանը վերաբերող գիտական մեմագրություններ, տարբեր աշխատություններ և ամսագրեր: Թարգմանվելու և հրատարակվելու են օտարերկրացիների կողմից հրատարակված գիտական աշխատություններ՝ թուրքերի և Թուրքիայի պատմության վերաբերյալ: Նոր հայտնագործություններին և գիտական խնդիրներին առնչվող հարցերը քննարկելու նպատակով կազմակերպվելու են ժողովներ և գիտաժողովներ:

Կետ 5-րդ. Ընկերությունը համագործակցելու է օտարերկրյա գիտական կազմակերպությունների, հետազոտական և հրատարակչական կենտրոնների հետ³⁸:

Աթաթուրքի նախաձեռնությամբ ստեղծված Թուրքական պատմագիտական ընկերությունը ստանձնել էր պատմությունն ուսումնասիրելու և այն նոր տարբերակով ներկայացնելու պարտականությունը, քանի որ քեմալականների նպատակն էր բարձրացնել թուրք ազգը ժամանակակից ազգերի մակար-

³⁸ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu, - Türk Tarih Kurumu Basımevi-Ankara 1973, s. 37, ss.158

դակին³⁹։ Հատկանշական է, որ Թուրքական պատմագիտական ընկերությունը Թուրքիայում համարվելով պետական պատմագիտական գլխավոր կենտրոն բացահայտ նշում է, որ ընկերության հիմնական նպատակը պատմությունը նոր տարբերակով ներկայացնելն է։ Տարօրինակ է, որ պատմագիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով ստեղծված կազմակերպությունը դեռևս չսկսած իր առաքելությունը վաղօրոք հայտարարում է, որ նախատեսում է պատմությունը ներկայացնել նորովի։ Ընկերությունն իր գործունեության հենց առաջին իսկ օրերին հայտարարում է թուրքական պատմական «նոր հայեցակարգի» մշակման մասին։ Ըստ այդ նոր հայեցակարգի ընկերությունը նպատակ է հետապնդում հասարակությանը ներկայացնել նոր տեղեկություններ թուրքերի ծագման վերաբերյալ, անել հնարավոր ամեն ինչ թուրքերի «Անատոլիայում տեղաբնիկ լինելու» հարցը հիմնավորելու համար, ինչպես նաև ներկայացնել այլ շատ «կարևոր» հարցեր։

Սակայն ընկերության գործունեությունն ուսումնասիրելու արդյունքում պարզվում է, որ այն աշխատել է ըստ համապատասխան հրահանգների և չի կարողացել անկաշկանդ հրատարակել մի նյութ, որը վա-

³⁹ *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. XXIX, ss. 775*

դօրոք չէր ստուգել կամ ուղղել Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը:

Գործունեության առաջին իսկ օրերին թուրքական պատմագիտական ընկերությանը հանձնարարվում է ուսումնարանների (լիցեյների) համար պատրաստել պատմության նոր դասագրքեր: Շատ կարճ ժամանակ հետո 1931թ. հուլիսի 19-ին թուրքական օջախների շենքի «Արևելյան սրահ» կոչվող վայրում Աթաթուրքի նախագահությամբ տեղի ունեցած ժողովի ընթացքում թևփիք բեյը Աթաթուրքին է հանձնում ուսումնական հաստատությունների համար նախատեսված պատմության դասագրքի առաջին հատորի ձեռագիր օրինակը: Ձեռագրերը մանրամասն զննելուց հետո Աթաթուրքը դրանք փոխանցում է Ազգային կրթության նախարար Էսաթ բեյին (Էսաթ Ուրաս) և հանձնարարում շուտափույթ սկսել դրանց հրատարակումը⁴⁰:

Թուրքական պատմագիտական ընկերության հրապարակումներում հաճախակի է հանդիպում այն արտահայտությունը, որ «Աթաթուրքը մանրամասն զննեց (օրինակ) պատմության դասագրքի ձեռագիր օրինակը, այնուհետև այն թույլատրեց տպագրության»: Ուշագրավ է այն փաստը, որ Աթաթուրքը չլինելով

⁴⁰ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu,, - *Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 7, ss.158*

պատմաբան կամ ընդհանրապես պատմության մասնագետ բնականաբար մանրամասն զննելու արդյունքում կարող էր փոխել աշխատության այս կամ այն հատվածը՝ այն հարմարեցնելով իր պատկերացումներին կամ ցանկություններին: Թուրքական պատմագիտական ընկերությունը «իրավունք չունենր» հրատարակելու թեկուզ փոքրիկ մի հոդված առանց Աթաթուրքի դրական եզրակացության: Նման պարագայում կարելի էր ենթադրել, որ թուրք պատմաբաններին ուղղակի ստիպել են ուսումնասիրել պատմությունը և այն ներկայացնել կեղծված տարբերակով: Այնուամենայնիվ, հակառակ մեր պատկերացումներին պարզվում է, որ Թուրքական պատմական ընկերության փոխնախագահ Աֆեթ Ինանը դեռևս 1930թ. իր գրած «Աթաթուրքը և պատմական թեզը» աշխատությունում «անհավատ» է անվանել նրանց, ովքեր դեմ են արտահայտվել Աթաթուրքի տեսակետին⁴¹:

1931թ. հուլիսի վերջերին կազմակերպությունը ստանում է մի նոր հանձնարարություն՝ այն է ստեղծել Թուրքիայի պատմության վերաբերյալ չորս հատորից բաղկացած աշխատություն (Tarih): Դարձյալ շատ կարճ ժամանակում ընկերության անդամներ՝ Թևֆիք Բըլըքօղլուի, Յուսուֆ Աքչուրայի, Հասան Ջեմիլ Չամբելիի, Դոկտոր Ռեշիթ Գալիփի, Շենսեթին Գյունալ-

⁴¹ *Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 54, ss. 111.*

թայի «աշխատասիրությամբ» ստեղծվում է չորս հատոր գիրք (յուրաքանչյուրը 400 էջ): Աթաթուրքը 4-րդ հատորի սևագրերը ուսումնասիրելուց հետո 1931թ. հոկտեմբերի 8-ին ընկերության նախագահ Թևֆիք բեյին հանձնարարում է կատարել որոշ անհրաժեշտ փոփոխություններ երկրի հարավային և արևմտյան շրջանների վերաբերյալ⁴²:

Դպրոցական դասագրքերը դժգոհություն առաջացրին հատկապես միջնակարգ դպրոցներում դասավանդող ուսուցիչների և հատկապես աշակերտների մոտ, քանի որ այդ դասագրքերով ուսուցիչները չէին կարողանում մանկավարժական հմտությամբ մատուցել նյութը, իսկ աշակերտների համար այն դյուրընկալ չէր:

Ուսումնասիրելով այդ դասագրքերը և պատմության քառահատոր աշխատությունը⁴³, կարելի է հասկանալ թուրք ուսուցիչների և դպրոցականների մտահոգությունը, քանի որ այնտեղ ներկայացվում է շատ ավելի բարդ և չհամակարգված նյութ, որում հնարավորինս բարդ է ներկայացվում Թուրքիայի պատմութ-

⁴² *Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983, s. 9, ss. 111.*

⁴³ *Kara K., Genel Türk Tarihi 1., Önde Yayıncılık, İstanbul, Mayıs 1998, ss. 156; Turan R., Ergözer N., Genel Türk Tarihi 1., Ders kitabı, Ocak Yayınları, Ankara 1997, ss. 157; Turan R., Ergözer N., Genel Türk Tarihi 2., Ders kitabı, Ocak Yayınları, Ankara 1997, ss. 224;*

յան ուսումնասիրությունը, այդ իսկ պատճառով հասարակության ավելի լայն զանգվածների կողմից այն դժվար է ընկալվում:

Աինչ օրս թուրքիայի պատմության դասագրքերում այդ երկրի պատմությունը ներկայացվում է կեղծարարություններով՝ հատկապես հարևան պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Ուսումնասիրելով այդ աշխատությունները հնարավոր չէ պատկերացում կազմել (համապատասխան ժամանակաշրջանում) օրինակ թուրքիայի հարևան (սահմանակից) պետությունների և նրանց հետ ունեցած թուրքիայի փոխհարաբերությունների մասին: Դասագրքերում ներկայացվում է մի այնպիսի իրավիճակ, որ ընթերցողն ուղղակի չի կարող պատկերացնել, որ այդ տարածաշրջանում թուրքիայի հարևանությամբ գոյություն ունի Հայաստան ու հայ ժողովուրդ: Փաստորեն սա մի փաստարկ է, որը ցույց է տալիս թուրքական իշխանությունների և նրան ենթակա թուրքական պատմագիտական ընկերության կողմից դրսևորված միտումնավոր կողմնապահությունը և հայերի նկատմամբ ընդգծված հակակրանքը:

Հանրապետության պաշտոնական պատմական հայեցակարգի բանաձևը մշակելու ընթացքում Աթաթուրքի մոտ մեծ հեղինակություն էր վայելում Յուսուֆ Աքչուրան՝ հանդես գալով որպես 1931թ.-ին ձևավորված թուրքական պատմական ուսումնասիրման

հանձնախմբի հիմնադիր խորհրդի անդամ, և 1932թ.-ին որպես այդ կազմակերպության առաջին նախագահ: Նա մասնակցել է նաև Ազգային պատմական դոկտրինայի «*Milli tarih doktrin*»-ի հիմնական փաստաթուղթ հանդիսացող «*Türk Tarihinin Ana Hatları*» (Թուրքիայի պատմության հիմնական ուղիները) գրքի ստեղծման աշխատանքներին: Աքչուրան իր հրապարակումներում նշում էր, որ հիմնական ուղիների թվում անհրաժեշտ է բացել մի նոր ճանապարհ՝ «թուրքական ազգայնականության ճանապարհը»⁴⁴:

Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ թուրքական իշխանությունները թուրքական պատմական հայեցակարգը մշակելիս աշխատել են բացառապես ազգայնական հայացքներ ունեցող մարդկանց հետ: Նման ընտրությունը բնականաբար Աթաթուրքին հնարավորություն էր տալիս ավելի հանգիստ գործելու և առանց որևէ խոչընդոտի միջամտելու այդ բնագավառում տեղի ունեցող զարգացումներին:

⁴⁴ *Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak*

Թուրքական պատմագիտական համագումարները

1932թ.-ին փետրվարի 14-ին Աթաթուրքի հրահանգով կազմակերպվեց դասընթաց՝ պատմության ուսուցիչներին նոր պատմական հայեցակարգը ներկայացնելու նպատակով: Այդ դասընթացը պետք է կոչվեր «Պատմության ուսուցիչների դասընթաց», սակայն առաջին հավաքույթից հետո այն կոչվեց «Թուրքական պատմագիտական առաջին համագումար» և բոլոր արձանագրությունները հրատարակվեցին այս անվանումով: Այնուհետև 1932 թվականի հուլիսի 2-11-ը Անկարայի ժողովրդական տան շենքում պաշտոնապես սկսվեցին Թուրքական պատմագիտական առաջին համագումարի աշխատանքները⁴⁵: Այն կազմակերպվել էր Ազգային կրթության նախարարության հետ համատեղ, որին հրավիրված էին Ստամբուլի համալսարանի պրոֆեսորներ, ինչպես նաև ուսումնարանների և միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչներ: Համագումարին մասնակցում էր 232 մարդ, որոնցից 25-ը Թուրքական պատմագիտական ընկերության անդամ, 10-ը համալսարանի ներկայա-

Yayınları, İstanbul, 1983, s. 33, ss. 111,

⁴⁵ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu., - Türk Tarih Kurumu Basıncı - Ankara 1973, s. 1, ss.158:

ցուցիչ, 1-ը գեղեցիկ արվեստների ակադեմիայի անդամ, 198-ը ուսումնարանների և միջնակարգ դպրոցների ուսուցիչներ:

Հատկանշական է այն փաստը, որ համագումարի մասնակիցների գերակշռող մասը ուսումնարանների և դպրոցների ուսուցիչներ էին: Դա խոսում է այն մասին, որ թուրքական իշխանությունները պետական գաղափարախոսությունը փորձում էին տարածել առաջին հերթին դպրոցահասակ երեխաների շրջանում: Թուրքական իշխանությունների նման քաղաքականությունն ինքնին հասկանալի է, քանի որ ընդամենը մի քանի տարի հետո նոր սերունդը պատմության վերաբերյալ ստանալու էր այն գիտելիքները, ինչ ներկայացնում էին Թուրքական պատմագիտական ընկերության պատմաբանները: Այսինքն թուրք երեխային տրվելու էր տեղեկություններ Աթաթուրքի ցանկության՝ «վերամշակված» և հրատարակված պատմության դասագրքերի միջոցով: Այդ ամենը թուրքական իշխանությունները ցանկանում էին իրագործել թուրք մանկավարժների միջոցով, որոնց ձեռքում էր գտնվում ապագա սերնդի կրթության ու դաստիարակության «խիստ պատասխանատու» գործը:

Համագումարի նախագահության կազմը հետևյալն էր. նախագահ՝ Ազգային կրթության նախա-

րար էսաթ Ուրաս⁴⁶, փոխնախագահ Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ և Անկարայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքական պատմության պրոֆեսոր Յուսուֆ Աքչուրա, Ազգային կրթության նախարարության կրթության և դաստիարակության վարչության պետ Իհսան (Սանգա): Քարտուղարներ՝ ազգային կրթության նախարարության հրատարակչության տնօրեն՝ Անկարայի արական դպրոցի պատմության ուսուցիչ Ֆաիք Ռեշիթ Բեյ, Թուրքական պատմագիտական ընկերության քարտուղար Մուսթաֆա Ուլուղ Բեյ⁴⁷:

Համագումարի բացման խոսքը հանձնարարվել էր Ազգային կրթության նախարար էսաթ Բեյին, իսկ Աթաթուրքը առանց հատուկ միջամտության հետևում էր այդ աշխատանքներին: Թուրքական պատմագիտական առաջին համագումարին մասնակցում էին միայն թուրք պրոֆեսորներ և ուսուցիչներ: Օտարերկրյա որևէ ներկայացուցիչ համագումարին չէր հրավիրվել⁴⁸:

⁴⁶ Հա այն նույն պատմաբանն է, որը զբաղվել է Հայկական հարցի և Հայոց Զեղասպանության հարցի ուսումնասիրությամբ և հայտնի է իր *“Tarihî Ermeniler ve Ermeni Meselesi”* աշխատությամբ:

⁴⁷ İğdemir U., *„Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu,” - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 11, ss.158,*

⁴⁸ İğdemir U., *„Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu,” - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 13, ss.158,*

Թուրքական պատմագիտական առաջին համագումարին օտարերկրացի պատմաբանների բացակայության կապակցությամբ կարելի է նշել մի քանի հնարավոր վարկած: Թուրքական իշխանությունները այդ ժամանակ դեռ չէին պատկերացնում թե ինչ է իրենից ներկայացնելու Թուրքական պատմագիտական ընկերությունը, ինչպես են իրենց դրսևորել այդ ընկերության աշխատանքներին ներգրավված մասնագետները: Հայտնի չէր թե ինչպես է կազմակերպվելու ուսուցիչների վերապատրաստման դասընթացը (հետագայում այն դարձավ համագումար), քանի որ դա ավելի շատ կրում էր ուսուցողական բնույթ և իրականում այդ ժամանակ նպատակ չի եղել կազմակերպել համագումար⁴⁹: Առաջին դասընթացին չէին կարող հրավիրվել միջազգային դիտորդներ, քանի որ թուրքերը այդ ժամանակ դեռ խիստ կարիք ունեին թուրքական պատմական նոր հայեցակարգը ներկայացնելու առաջին հերթին իրենք իրենց:

Համագումարի առաջին օրը օրակարգում քննարկման առարկա էր հանդիսանում Թուրքական պատմագիտական ընկերության անդամ Աֆեթ Ինանի «Պատմությունից առաջ և պատմության լույսի ներքո»

⁴⁹ İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu, - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973, s. 11, ss.158,

վերտառությամբ զեկուցումը:⁵⁰ Երկրորդ օրը քննարկման էր ներկայացվել Թուրքական պատմագիտական ընկերության քարտուղար, դոկտոր Ռեշիթ Գալիփի «Հայացք թուրքական ցեղի և մշակույթի պատմությանը» վերտառությամբ զեկուցումը⁵¹: Երրորդ օրը Ստամբուլի համալսարանի մարդաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Շեֆքեթ Ազիզի «Թուրքերի մարդաբանությունը» զեկուցումը:⁵² Վեցերորդ օրը թուրքական պատմագիտական ուսումնասիրման ընկերության նախագահ Յուսուֆ Աքչուրա Օղլուի առաջարկությամբ քննարկվել է «Պատմությունը գրելու և պատմությունը պարտադրել կարդալու» մանրամասներին վերաբերող գիտաժողովի կազմակերպման հարցերը⁵³:

Թուրքական պատմագիտական ընկերության գործունեության սկզբնական շրջանի ուսումնասիրությամբ կարելի է եզրակացնել, որ այդ ընկերությունը ստեղծվել է հատուկ նպատակներով և այդ իրողությունն իրենք թուրքերն էլ չեն թաքցնում: Այս տեսանկյունից պարզ է դառնում, որ Թուրքական պատ-

⁵⁰ *Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, Münakaşalar, Ankara* -, s. 2, ss. 631,

⁵¹ *Şişu İniyi tetteiim, tpe 96:*

⁵² *Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, Münakaşalar, Ankara* -, s. 240, s. 631,

⁵³ *Şişu İniyi tetteiim, tpe 574*

մագիտական ընկերության հիմնադիրները և «հովանավորները» հասարակությանը ուղղակի պարտադրել են տեղեկանալ ընկերության կողմից ներկայացվող պատմական «նոր հայեցակարգին»:

1932 թվականի փետրվարի 14-ին Աթաթուրքի հրամաններում թուրքական պատմագիտական առաջին համագումարից բացի տեղ է գտել ևս 3 խնդիր:

1. Վերջին ուսումնասիրությունների և փաստերի հիման վրա կրկին գրի առնել «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը:

2. Ուսումնասիրությունների համար պատրաստված 4 հատոր պատմության գրքերում անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո 1932-1933 ուսումնական տարվա համար հանձնել նոր հրատարակության:

3. Նախակրթարանների համար պատրաստել պատմության նոր դասագրքեր:

Այս հարցերը քննարկվեցին 1932 թվականի փետրվարի 25-ին սկսված և մինչև մարտի 10-ը տևած համագումարի 5 ժողովների ընթացքում, որտեղ հստակ հանձնարարություններ տրվեց համապատասխան մարմիններին: Աթաթուրքը խնդիր էր դրել, որ «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը պատրաստ լինի մինչև 1932թ.-ի աշնանը: 1932թ.-ի հուլիսի 13-ից մինչև հոկտեմբերի 17-ը Անկարայում և

Ստամբուլում տեղի ունեցած նստաշրջանների ընթացքում կայացվեցին վերջնական որոշումներ այն մասին, թե ովքեր պետք է գրեն աշխատությունները և այն երբ է պատրաստ լինելու: Ըստ այդմ որոշվեց պատմության բաժինը հանձնարարել Թուրքական պատմագիտական ընկերության անդամներին, իսկ մշակույթի բաժինը առանձին մասնագետների: Այսպիսով ակնհայտ երևում է, որ թուրքական իշխանությունների խնդիրը ոչ թե պատմության իրական պատկերը ներկայացնելն էր, այլ ուղղակի նրանց հետաքրքրում էր հատկապես պատմության բաժինը «յուրովի» ներկայացնելու հարցը: Այլապես մշակույթի բաժինը և այդ բաժնի կողմից հրատարակված նյութերը նույնպես կարող էին պահել հատուկ հսկողության տակ: Սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այդ բաժնի աշխատանքներին Աթաթուրքը հիմնականում չի միջամտել:

Թուրքական պատմագիտական առաջին համագումարից հինգ տարի հետո 1937թ.-ի սեպտեմբերի 20-25-ը Ստամբուլի Դոլմաբահչե պալատում գումարվեց թուրքական պատմագիտական երկրորդ համագումար:

րը⁵⁴: Այս համագումարին առաջին անգամ հրավիրվել էին օտարերկրացի գիտնականներ⁵⁵: Թուրքական պատմագիտական երկրորդ համագումարի կազմակերպման նպատակն էր օտարերկրացի գիտնականներին ներկայացնել թուրքական պատմական «նոր հայեցակարգը» և ուսումնասիրված տեղեկությունները: Բացի այդ, ուսումնասիրությունների գործընթացի վերաբերյալ համագումարի ընթացքում կազմակերպվել է ցուցահանդես, ուր ներկայացվել են Օսմանյան կայսրության վերջին շրջանին և Միջին Արևելքում զարգացող իրադարձություններին վերաբերող տարբեր նյութեր⁵⁶: Թուրքական պատմագիտական երկրորդ համագումարին ներկայացված բոլոր ուսումնասիրությունները Աթաթուրքը կարդացել էր մեկ առ մեկ, որից հետո միայն թույլատրել էր դրանք ներկայացնել⁵⁷:

⁵⁴ *II Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Yayinevi, IX. Scri: No. 2, Kenan Matbaası, İstanbul, 1943, s. XXXVII, ss. 1187,*

⁵⁵ *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basimevi - Ankara, 1948, ss.775, Şbu Ünlü Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1989, s.1, ss.40,*

⁵⁶ *Türk Tarih Kurumu Yayınları, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kürümü Basimevi - Ankara, 1989, s.2, ss.40.*

⁵⁷ *İğdemir U., Cumhuriyetin 50 Yılında Türk Tarih Kurumu, Türk Tarih Kurumu Basimevi - Ankara, 1973, s. 41, ss. 158.*

Աթաթուրքը հսկողության տակ էր պահում համագումարի ընթացքում ներկայացված բոլոր հրապարակումներն ու ելույթները, այդ իսկ պատճառով համագումարի աշխատանքները ընթանում էին ավելի «հավասարակշռված»:

1943թ.-ի նոյեմբերի 15-20-ը Անկարայում տեղի ունեցած Թուրքական պատմագիտական երրորդ համագումարի, աշխատանքները 2-րդ համաշխարհային պատերազմի պատճառով սկսվեցին ուշացումով: Պատմության ուսումնասիրությունների աշխատանքներին ավելի մոտիկից հետևող Իսմեթ Ինոնյուն (որը դարձել էր Թուրքիայի Հանրապետության նախագահ 1938թ.) նպատակահարմար չգտավ երրորդ համագումարի աշխատանքները սկսել 1943թվականից ավելի ուշ⁵⁸:

Թուրքական իշխանությունները դրա պատճառները կապում էին Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ: 1942թ.-ին Ստալինգրադի ճակատամարտից հետո Թուրքական իշխանությունների համար ամեն ինչ պարզ էր, արդեն պատերազմի հետագա ընթացքը կանխորոշված էր և ուժերի նոր վերադասավորում տարածաշրջանում չէր կարող ակնկալվել: Նման պարագայում համա-

⁵⁸ III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. XXIX

գումարի աշխատանքները հարկավոր էր սկսել 1943թվականին:

Երրորդ համագումարին Թուրքական պատմագիտական ընկերության գլխավոր քարտուղարն իր ելույթում նշում է. «Վերջին վեց տարիներին Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը իրագործելու նպատակով ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցառումները: Այդ ժամանակահատվածում կատարվել է Անատոլիայում մեծ պետության ստեղծման, խեթերի սփռման սահմանների ուսումնասիրությունը, հին Անատոլիայի, Միջին Ասիայի, Էգեյան ծովի ավազանի, հարավային Ռուսաստանի և արևելյան Եվրոպայի մշակույթների ուսումնասիրությունները, ինչպես նաև հրապարակվել են հազարավոր տարիներ ի վեր մեծ քաղաքակրթության բնակավայր հանդիսացող Անատոլիայի պատմությանը վերաբերող փաստաթղթեր»⁵⁹:

Անհրաժեշտ է նշել, որ Թուրքական պատմագիտական ընկերության մասնագետները անդրադառնալով արաբներին, պարսիկներին, իրաքցիներին, սելջուկներին, ռուսներին, չինացիներին թուրքական պաշտոնական պատմագրության մեջ հատկապես Փոքր Ասիայի (Արևմտյան Հայաստանը ներառյալ) վերաբերյալ հրա-

⁵⁹ *Տես նույն տեղում, էջ 14 – 15:*

պարակումներում որևէ կերպ չեն անդրադառնում հայերին: Թուրքական պատմագիտական ընկերությունն անդրադարձել է այդ տարածաշրջանում ապրող գրեթե բոլոր ժողովուրդներին բացի հայերից:⁶⁰ Փաստորեն թուրք պատմաբանները հարցին անդրադարձել են այն տեսանկյունից, թե իբր թուրքերը այդ տարածաշրջանի ամենահին ժողովուրդն են:

Թուրքական պատմագիտական չորրորդ համագումարը տեղի է ունեցել 1948 թվականի նոյեմբերի 10-14-ը Անկարայում, Լեզվի և պատմա-աշխարհագրական ֆակուլտետի մասնաշենքում: Ինչպես ընկերության աշխատանքներին, այնպես էլ համագումարի կազմակերպմանը հետևում էին հանրապետության այն ժամանակվա նախագահ Ի. Ինոնյուն, վարչապետ Յ. Սաքան, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Շ. Սարաջօղլուն, նախարարները և Գլխավոր շտաբի պետ Ս. Օմուրթաքը⁶¹:

Ընկերությունը շարունակում էր մնալ պետական հովանավորության ներքո և կատարում էր պետության առաջադրանքները: Ինչպես արդեն նշվել է, ընկերու-

⁶⁰ *III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948, s. 14-46, ss. 775.*

⁶¹ *IV Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1952, s. XI, ss. 518.*

յան առջև նպատակ էր դրված պատրաստել և աշխարհին ներկայացնել թուրքական պատմական նոր հայեցակարգը:

Թուրքական պատմական չորրորդ համագումարին ի թիվս այլ նյութերի ներկայացվել է ուսումնասիրություն «Օսմանյան ղեկավարությունը և վրացիները» թեմայով: Այն հետազայում հրապարակվել է ընկերության պաշտոնական տեղեկագրում: Թուրք պատմաբաններին անհանգստություն է պատճառել վրացի երկու պատմաբանի կողմից ներկայացված «վրացական հարցը», որի արդյունքում էլ ուսումնասիրվել և հրապարակվել է Մահմուդ Երկրորդի ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերը:

Վրացի պատմաբանները նշում են, որ թուրքերը չափազանց դաժան են վարվել վրացի ժողովրդի նկատմամբ, վրացիներին պարտադրել են մոռանալ իրենց կրոնը և ընդունել իսլամ: Այդ պատճառով էլ վրացի ժողովուրդը միավորվելով ռուսների հետ պատերազմել է օսմանցիների դեմ⁶²:

Հետաքրքրական է, որ ընկերությունը պաշտոնական պատմագրության մեջ ազատ անդրադարձել է «վրացական հարցին», վստահ լինելով, որ նման վտանգ Թուրքիային երբեք չի սպառնում: Անդրադառնալով փաստորեն գոյություն չունեցող «վրացական

⁶² IV T2rk Tar4h Kongres4, T2rk Tar4h Kurumu Basimev4 - Ankara, 1952, s. 317, ss. 518.

հարցին» ընկերության պատմաբանները չեն անդրադարձել իրենց քաջ հայտնի «Հայկական հարցին»՝ ըստ երևույթին գիտակցելով դրա խիստ վտանգավոր հետևանքները:

Ուսումնասիրելով Թուրքական պատմա-գիտական ընկերության պաշտոնական տեղեկագրերը, այս ժամանակահատվածից հետո պարզ է դառնում և մինչև 1950 - ական թվականների հրապարակումներն ընկերությունը գտնվելով պետական հովանավորության ներքո իր ուսումնասիրություններում հազվադեպ և բոլորովին կարևորություն չներկայացնող դեպքերում է անդրադառնում հայերին (Հայաստանին)⁶³: Դա պայմանավորված էր այդ ժամանակաշրջանում թուրքական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ որդեգրած մերժողական քաղաքականությամբ: Թուրքերը կարծում էին, որ մոռացության մատնելու և ընդհանրապես հայերին չանդրադառնալու պայմաններում հասարակության հիշողությունից ժամանակի ընթացքում դուրս կմնան օսմանական իշխանությունների կողմից ոչ վաղ անցյալում իրագործված Հայոց ցեղասպանության իրողությունները, որոնց իրավահաջորդ են համարվում ինչպես քեմալական շրջանի, այնպես էլ ներկայիս թուրքական իշխանությունները:

⁶³ *Strü, "Belleten"-ներ 1957թ.-ից մինչև 1965թ.-ը:*

Թուրքական պատմագիտական ընկերության 25-րդ տարեդարձի կապակցությամբ 1956թ. ապրիլի 12-17-ը տեղի ունեցավ Թուրքական պատմական հինգերորդ համագումարը⁶⁴։ Այս անգամ նույնպես Օսմանյան պատմությանը վերաբերող հարցեր ներկայացնելիս թուրք պատմաբանները անդրադարձան մի շարք երկրների այդ թվում նույնիսկ Հունգարիային և Բոսնիային՝ չանդրադառնալով Հայաստանին կամ հայերին⁶⁵։

Փաստորեն 25 տարիների ուսումնասիրությունների արդյունքում, թուրք պատմաբանները, որոնք գրում էին Թուրքիայի պաշտոնական պատմագրությունը, բոլոր հինգ համագումարների ընթացքում բոլորովին չեն անդրադարձել Հայաստանին։

Թուրքական պատմական հինգերորդ համագումարից հետո 1961 թվականի հոկտեմբերի 20-26-ին, տեղի ունեցավ Թուրքական պատմական վեցերորդ, իսկ 1970 թվականի սեպտեմբերի 25-29-ին՝ յոթերորդ համագումարները, որոնք իրենց կարևորությամբ և անհրաժեշտությամբ ավելի քիչ էին աչքի ընկնում քան նախորդները, սակայն ընկերության որդեգրած ուղին պահպանվում էր նաև այս համագումարների ժամանակ⁶⁶։

⁶⁴ *V Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1960, s. IX, ss. 795.*

⁶⁵ *Şinü ünyân ıphkânı, tğ 464:*

⁶⁶ *\$6dem4r Ulu6, Cumhuriyet4n 50 Yilinda T2rk Tar4h Kurumu, T2rk Tar4h Kurumu Basımev4 - Ankara, 1973, s. 45, ss. 158.*

Թուրքական պատմագիտական ութերորդ համագումարը տեղի է ունեցել 1976թ.-ի հոկտեմբերի 11-ին: Թուրքական պատմագիտական ընկերության գլխավոր տնօրեն Ուլուղ Իզդեմիրն իր զեկույցում նշել է, որ ընկերությունը բոլոր հնարավորություններն ուղղել է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան 100 ամյակին նվիրված համագումարը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Նախապատրաստական աշխատանքներին հետևում էր այն ժամանակվա նախագահ Ֆահրի Քորուքուրքը:

Ութերորդ համագումարին Աթաթուրքի 100 ամյակի կապակցությամբ հնչել է հետևյալ առաջարկությունները.

- կրկին հրատարակել Աթաթուրքի ելույթները,
- նախապատրաստել և հրատարակել Աթաթուրքի ելույթների և հայտարարությունների շարքը,
- վերջին տարիներին հրապարակ եկած փաստաթղթերի լույսի ներքո կրկին հրատարակել Աթաթուրքի կենսագրական մանրամասները,
- հրատարակել օտարերկրյա թերթերում ու ամսագրերում տեղ գտած բոլոր նյութերը, որոնք անդրադարձել են Աթաթուրքի ժամանակաշրջանին,
- որպես մենագրություն հրատարակել Աթաթուրքի նամակները, որոնք վերաբերում են

պատմությանն ուղղված նրա աշխատանքներին,

- 1981 թվականին Աթաթուրքի ծննդյան առթիվ հրավիրել թուրքական պատմական ինստիտուտի համագումարը,
- կրկին գրել և մինչև իններորդ համագումարը հրատարակել «Թուրքիայի պատմության հիմնական ուղիները» գիրքը,
- կազմակերպել մրցույթ «Թուրքիայի պատմությունը հին ժամանակներից մինչև 1920-ական թվականները» մեկ հատորից բաղկացած գիրք, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետությանը նվիրված 1920-1970թթ.-ին վերաբերող պատմության գիրք գրելու համար,
- հատկացնել 50.000 լիրա մրցանակ Աթաթուրքի շրջանին վերաբերող ամենալավ աշխատության համար,
- հավաքել Աթաթուրքին վերաբերող բոլոր փաստաթղթերը և ստեղծել Աթաթուրքի արխիվը,
- կազմակերպել սեմինար նվիրված Աթաթուրքի կյանքին և ստեղծագործություններին,
- կազմել Աթաթուրքին և Հանրապետությանը նվիրված մատենագրություն՝ հավաքելով հրատարակված տեղական և օտարերկրյա բոլոր նյութերը,

- հրատարակել Աթաթուրքին նվիրված ալբոմ,
- ստեղծել Աթաթուրքի մասին պատմող կինոնկար⁶⁷:

Փաստորեն թուրքական պատմական ութերորդ համագումարը ամբողջովին նվիրված էր Աթաթուրքին: Երկրի զինվորական իշխանությունները և ընկերության անդամները ցանկանում էին իրենց նման վերաբերմունքով ցույց տալ, թե ինչպիսի մեծ գործ է կատարել Աթաթուրքը թուրքական պատմական նոր հայեցակարգը ամբողջ երկրում և արտերկրում շրջանառության մեջ դնելով:

1980թ.-ի սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած երկրորդ ռազմական հեղաշրջումը (Առաջինը տեղի է ունեցել 1960թ.-ի մայիսի 27-ին) թուրքական պատմական հայեցակարգը հանրությանը ներկայացնելու տեսանկյունից չափազանց օգտակար էր թուրքական իշխանությունների համար: Այդ ընթացքում ուշադրություն էր հրավիրվում հատկապես կրթության բնագավառի և պատմության ուսումնասիրման վրա:

Թուրքիայի Հանրապետության և Թուրքական պատմական ընկերության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի ծննդյան 100 ամյակի կապակցությամբ

⁶⁷ Afetinan A., "M.Kemal Atatürk'ün Doğumunun 100. yıldönümü (19 Mayıs 1981) Türk Tarih Kurumunun Kuruluşunun 50. yıldönümü (15 Nisan 1981), *Belleten, cilt:XLIV, sayı: 176, Ekim 1980, s. 633-634, ss. 629-811,*

յամբ 1981թ.-ի սեպտեմբերի 21-25-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, բանակի գեներալ Քենան Էվրենի գլխավորությամբ (այն ժամանակ նախագահի պարտականությունները կատարում էր Էվրենը) Անկարայում հրավիրվում է Թուրքական պատմագիտական իններորդ համագումարը, որի ընթացքում Էվրենը հանդես է գալիս ընդարձակ ելույթով և նշում, որ Թուրքական պատմագիտական ընկերությունն իր գործունեության ընթացքում հասել է մեծ հաջողությունների և պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները: Այնուհետև ելույթ են ունենում Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ, պրոֆեսոր Էնվեր Ջիյա Քարալը, ընկերության և իններորդ համագումարի գլխավոր քարտուղար, պրոֆեսոր Սեդաթ Ալփը, ինչպես նաև ընկերության գլխավոր տնօրեն Ուլուղ Իդրեմիրը: Էնվեր Ջիյա Քարալը Թուրքիայում հայտնի է որպես Թուրքական պատմագիտական ընկերության ամենաժրջան նախագահ, որի ղեկավարման ժամանակաշրջանում շատ ավելի ակտիվ և մատչելի կերպով է հանրությանը ներկայացվել թուրքական պատմական նոր հայեցակարգը: Նա հեղինակ է «Թուրքիայի Յանրապետության պատմությունը» (Ստամբուլ, 1944թ.) աշխատության:

Համագումարին ներկայացվել է ուսումնասիրություններ Միջին Ասիայի, Միջնադարյան Թուրքիայի

պատմության և Օսմանյան պատմության վերաբերյալ: Օսմանյան պատմության բաժնում առաջին անգամ մեծ տեղ է հատկացվել Օսմանյան կայսրությունում ապրող հայ ազգաբնակչության հետ այդ երկրի հարաբերություններին⁶⁸:

Շատ կարևոր է ընդգծել այն փաստը, որ Քարալի նախագահության ժամկետները համընկավ ASALA-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) հայտնի դեպքերի հետ: Նման պարագայում ընկերությունը պետք է ավելի ակտիվ և «նպատակաուղղված» գործեր, սակայն իրողությունն այն է, որ նշված ժամանակահատվածում Թուրքական պատմագիտական ընկերության հեղինակությունը զնալով նվազեց: Այդ տարիներին դարձյալ հրատարակվեցին թուրքերի ծագմանը վերաբերող ուսումնասիրություններ, շատ ավելի հրապարակումներ հայտնվեցին Թուրքական պատմագիտական ընկերության օրգան հանդիսացող «Belleten»-ներում հատկապես հայերի վերաբերյալ: Փաստորեն այս ամենը սկսվեց 1965 թվականին երևանում տեղի ունեցած բողոքի ցույցի և ավելի ակտիվ՝ 1973 թվականից սկսված ASALA-ի գործողություններից հետո, որը տևեց մինչև 1980-ական թվականները:

⁶⁸ Pulat O., @IX Türk Tarih Kongresi@, Belleten, Cilt: XLV/2, sayı:180, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara 1981, s. 587-588, ss. 433-588,

Հայերին անդրադառնալու խնդիրը թուրք պատմաբանների համար անհրաժեշտություն դարձավ այն ժամանակ, երբ 1945թ. Ստալինը ցանկանում էր Արևմտյան Հայաստանի որոշ հողեր միացնել Վրաստանին և Հայաստանին: Հայտնի է, որ 1946-47թթ. տեղի ունեցած մեծ ներգաղթը դեպի Հայաստան կազմակերպվել էր հայերին այդ տարածքներում վերաբնակեցնելու նպատակով: Սակայն խորհրդային իշխանությունների մտադրությունները չիրագործվեցին, քանի որ աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին ակտիվ միջամտում էր ԱՄՆ-ը: Այս իրողությունը մեծ անհանգստություն պատճառեց թուրքերին, որի արդյունքում էլ թուրքական պաշտոնական պատմագրությունը կերտող պատմաբանները 1946թ.-ից ի վեր իրենց հրապարակումներում սկսեցին շատ հազվադեպ անդրադառնալով հայերին՝ մերժել նրանց երբևէ գոյությունը և ունեցած դերը Փոքր Ասիայի տարածաշրջանում:

Ա.Քեմալին հաջողվում է մասամբ հասնել իր նպատակին՝ այն է, թուրք հասարակությանը և հատկապես նոր սերնդին ներկայացնել թուրքական պատմական նոր հայեցակարգ:

Աթաթուրքն իր բոլոր ջանքերը կենտրոնացնելով թուրքական պատմագիտական ընկերության գործունեության ուղղությամբ, լիարժեք հաջողության հասնելու համար, միաժամանակ փորձում է թուրքիայում

մեծացնել հարգանքը թուրքերեն լեզվի նկատմամբ և ապահովել թուրքերենի անկախությունը այլ լեզուների ազդեցությունից⁶⁹:

Թուրքական պատմագիտական ընկերությունը 1963 թվականից հետո մինչ օրս կազմակերպում է «Աթաթուրքի տարեկան գիտաժողովներ» միջոցառումը, որը ներառում է Թուրքիային և Թուրքիայի պատմությանը վերաբերող տարբեր խնդիրներ⁷⁰:

Թուրքիայի Հանրապետության նախարարների խորհրդի 11.VIII.1983թ.-ի թիվ 2876 որոշմամբ Թուրքական պատմագիտական ընկերությունը վերանվանվում է Թուրքիայի Հանրապետության Աթաթուրքի անվան մշակույթի, լեզվի և պատմության բարձրագույն ընկերություն⁷¹:

⁶⁹ *Türk Dil Kurumunun 40 Yılı, Türk Dil Kurumu Yayınları, Ankara Üniversitesi Basımevi, 1972, s. 15, ss. 186,*

⁷⁰ *Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk tarih Kurumu Yayınları, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1989, s. 3, ss. 40*

⁷¹ *Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989, s.1, ss.40,*

ՎԵՐՋԱԲԱՆ

Փաստորեն 1928 թվականին ժողովրդահանրապետական կուսակցության համագումարին հնչած Քեմալի հայտնի ճառը իր ուրույն տեղն է գտել թուրքական պաշտոնական պատմագրության մեջ և կրկնվում է մինչ օրս: Սակայն Քեմալի ելույթը չի պատասխանում այն հարցերին, որոնք պահանջում են օբյեկտիվ պատմական ուսումնասիրությունները: Կարելի է ենթադրել, որ մինչ այդ թուրքիայում ազգային շարժում գոյություն չի ունեցել: Բնականաբար պատմաբանը (գիտնականը) չի կարող այդ ելույթով պայմանավորել թուրքիայի ողջ նորագույն պատմությունը: Բացի այդ պաշտոնական հրատարակություն հանդիսացող "Tarih" (պատմություն) աշխատությունը, որը վերաբերում է թուրքիայի նորագույն պատմությանը, չորրորդ հատորի մեջ ոչ միայն ամբողջությամբ հետևում է Քեմալի հայեցակարգին, այլև սահմանափակվում է բացառապես այն տվյալներով, որոնք նշվել են այդ ելույթում⁷²:

Աթաթուրքի ճառը ժամանակի ընթացքում խոր արձատներ է գցում թուրքական պատմագրության մեջ և ընկալվում որպես թուրքական պաշտոնական

⁷² Миллер А. Ф., Очерки новейшей истории Турции, Издательство Академия Наук СССР, Москва 1948, Ленинград, ст. 8, ст. 280,

պատմագրության հիմնական ուղղություն: Ամբողջ
թուրքական պատմագրության մեջ պահպանվել են
այդ ճառի դրույթները և դրանք որպես թուրքական
պատմական նոր հայեցակարգ ներկայացվել են ինչ-
պես թուրքական պատմագիտական ընկերության,
այնպես էլ ամբողջ թուրքական պատմագիտական
աշխատություններում և հրապարակումներում:

Փաստորեն թուրք պատմաբանները փորձում են
հասարակությանը ներկայացնել թուրքական պատ-
մագրության և ընդհանրապես թուրքիայի պատ-
մության թուրքական տարբերակը: Նրանք ոչ միայն
ժխտում են հայերի գոյությունը Արևմտյան
Հայաստանում, այլ նաև փորձում են ամեն կերպ
ցույց տալ, որ այդ տարածաշրջանում ամենահին
ժամանակներից ապրել են թուրքական ցեղեր:

Չնայած նրան, որ հետագայում բավականաչափ
նվազել է թուրքական պատմագիտական ընկերու-
յան դերը պատմագրության ուսումնասիրման ոլոր-
տում, այնուամենայնիվ մինչ օրս թուրք պատմա-
բանների առանձին աշխատություններում դեռևս մ-
նում է քեմալիզմի ժամանակաշրջանի ազդեցությու-
նը: Այս իրողությունը ցույց է տալիս քեմալական
պատմության «նվաճումը», որին ժամանակի ընթաց-
քում ձգտել են հասնել թուրքիայի Հանրապետու-
յան իշխանությունները:

Աղբյուրներ և գրականություն

**Թուրքական պատմագիտական ընկերության
հրապարակումները. /գրքեր և հոդվածներ/**

1. Afetinan A., "Türkiye Cumhuriyeti Devleti", Belleten, Cilt: XLVII, Ekim 1983, Sa. 188, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1984.
2. Afetinan A., "M.Kemal Atatürkün Doğumunun 100. yıldönümü (19 Mayıs 1981) Türk Tarih Kurumunun Kuruluşunun 50. yıldönümü (15 Nisan 1981), Belleten, cilt:XLIV, sayı: 176, Ekim 1980.
3. Atatürkün Söylev ve Demeçleri, c. 2, Ankara, 1959.
4. Atatürkün Söylev ve Demeçleri II, ikinci baskı, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1959.
5. Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Yayınları, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1989.
6. Atatürke Saygı, Türk Dil Kurumu Yayınları:288, Ankara Üniversitesi Basımevi, 1969.
7. Avcıoğlu D., "Milli Kurtuluş Tarihi 1838'den 1995'e", İkinci Kitap (İkinci Baskı), Tekin Yayınevi, Yayılcık Matbaası, İstanbul, 1976.
8. Aydemir Ş. S., "Makedonya'dan Ortaasya'ya Enver Paşa", İkinci Cilt (1908 - 1914), II Baskı, İstanbul, Remzi Kitabevi, 1976.

9. Bayur Y.H., Türk İnkılâbı Tarihi, Cild III.,s. 8-15,
10. Bayur Y.H., Türk İnkılâbı Tarihi, Cild II., 5-15,
11. Belleten, Cilt: XLV/ç, Sayı: 177, Ocak 1981, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1981.
12. Berktaş H., Cumhuriyet İdeolojisi ve Fuat Köprülü, Kaynak Yayınları, İstanbul, 1983.
13. Demiray K. "Türkçe Sözlük ve Yazım Klavuzu", Milliyet, 1990.
14. İğdemir U., Atatürk ve Belleten, Belleten III/10(1939) 355-356, lev, XCIX.
15. İğdemir U., „Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu,, - Türk Tarih Kurumu Basımevi - Ankara 1973.
16. Kara K., Genel Türk Tarihi 1., Önde Yayıncılık, İstanbul, Mayıs 1998.
17. Metin H., "Türkiyenin Siyasi Tarihinde Ermeniler ve Ermeni Olayları", Milli Eğitim bakanlığı Yayınları: 2437, Bilim ve Kültür Eserleri dizisi:621, Araştırma – İnceleme:32, İstanbul, 1992.
18. Özkaya T, "Sovyetler Birliği'nde Atatürk Üzerine Araştırmalar", Belleten, Cilt: XLV/1, Ocak 1981, Sa.:177, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1981.
19. Pulat O., "IX Türk Tarih Kongresi", Belleten, Cilt: XLV/2, sayı:180, Ekim 1981, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara 1981.

20. Turan R., Ergezer N., Genel Türk Tarihi 1., Ders kitabı, Ocak Yayınları, Ankara 1997.
21. Turan R., Ergezer N., Genel Türk Tarihi 2., Ders kitabı, Ocak Yayınları, Ankara 1997.
22. Türk Dil Kurumunun 40 Yılı, Türk Dil Kurumu Yayınları, Ankara Üniversitesi Basımevi, 1972.
23. Türk Tarih Kurumu Yayın Kataloğu, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1989.
24. Tütengil C. O., "Atatürk'ü Anlamak ve Tamamlamak", Varlık Yayınevi, Ankara Caddesi, İstanbul, 1975.
25. Uras E. "Tarihte Emeniler ve Ermeni Meselesi", Ankara, 1950
26. Birinci Türk Tarih Kongresi, Konferanslar, Münakaşalar , Ankara.
27. III Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1948.
28. IV Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1952.
29. V Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basımevi - Ankara, 1960.
30. Զուլալյան Մ., Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ /հին և միջին դարեր/, «Հայաստան», 1995թ., 192 էջ:

31. Զովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, «Ձանգակ 97» հրատ., 2002թ., 29 էջ:
32. Սահակյան Ռ. Ցեղասպանության պատմությունից, Երևան «Հայաստան», 1990թ.:
33. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ», Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1963թ.:
34. Սարգիսով Ե.Ղ., Սաֆրաստյան Ա.Խ., Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին, Արևելագիտական ժողովածու I, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960թ.:
35. Սիմոնյան Հր.Ռ., «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը», «Հայաստան» հրատ., Երևան, 1986թ.:
36. Բաղդասարյան Ս. Կ., «Թուրքիայի Քաղաքական Համակարգը 1920-1930- ական թթ.-ին», Ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2000թ.:
37. Зулалян М.К., “Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии”, Издательство Академии наук СССР, Ереван 1970, стр. 147.

38. Колесников А.А., "Народные дома в общественно — политической и культурной жизни турецкой республики", Издательство "Наука", Главная редакция восточной литературы, Москва 1984г.
39. Миллер А.Ф., Очерки новейшей истории Турции, Издательство Академия Наук СССР, Москва 1948г.
40. Рустамов Ю., „Современная турецкая буржуазная социология,, , Баку, Изд. АН Азерб. ССР, 1967г.
41. Шамстудинов А., Турецкая Республика. Москва, 1962г.

Տպագրված է  ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
տպարանում

ք. Երևան, Պուշկինի 46

Հեռ.՝ (374 1) 53 96 47, (374 9) 42 51 63

E-MAIL: lusabats2002@yahoo.com; lusabats@mail.ru

Տպաքանակը՝ 500 օրինակ:

